

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N << ԵԲ-ԲՄԱՇՁԲ-18/47 >>**

ք. Երևան

« 15 » մարտի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթոյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԵՎ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հայրյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Չնքուշի 14/2 հասցեում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մասնաշենքը նոր մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ օգոստոսի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից **հաշված 30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **64849200.0 (վաթսունչորս միլիոն ութ հարյուր քառասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 10808200.0 (տաս միլիոն ութ հարյուր ութ հազար երկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը : դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱժՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող

կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան  
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900012410743  
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան



### Կապալառու

«ԼԵՎ» ՍՊԸ  
ք. Երևան, Կոմիտասի 45/1 բն.68  
«Կոնվերս բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1930006289100100  
ՀՎՀՀ 00802844

Ա. Հայրյան



**Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի Չնքուշի 14/2 հասցեում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության մասնաշենքը նոր մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ**

*ԾԱՎԱԼԱԹԵՐԹ*

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	<b>Վերանորոգվող մասնաշենքի շինարարական աշխատանքներ</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
	<b>1-ին,2-րդ,3-րդ հարկեր</b>				
1	Բետոնե աստիճանների և հարթակի քանդում	մ <sup>3</sup>	4.200	11.884	49.913
2	Միջնորմների քանդում այդ թվում բացվածքի	մ <sup>2</sup>	220.000	0.615	135.300
3	Առկա մ/պլաստե դռների քանդում պահպանելով հետագա օգտագործման համար	մ <sup>2</sup>	37.600	0.884	33.238
4	Առկա մ/պլաստե դռների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ <sup>2</sup>	1.200	0.884	1.061
5	Մանրահատակից հատակների քանդում ենթաշերտով	մ <sup>2</sup>	555.000	0.411	228.105
6	Կերամիկական սալերից հատակների քանդում ենթաշերտով /սանհանգույցներ/	մ <sup>2</sup>	52.000	0.322	16.744
7	Պատերից հախճասալի քանդում	մ <sup>2</sup>	87.200	0.445	38.804
8	Աստիճանաբարիքների քանդում	զմ	27.300	0.272	7.426
9	Նախկինում շարված 40սմ տուֆ քարից բացվածքի քանդում /4,41մ2/	մ <sup>3</sup>	1.764	8.979	15.839
10	Բետոնե ցանկապատի քանդում	մ <sup>3</sup>	10.600	13.862	146.937
11	Մետաղական ցանկապատի քանդում	զմ	95.000	0.349	33.155
12	Զրուցատաղավարի քանդում /2հատ/	տն	1.800	32.028	57.650
13	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 1կմ	տն	75.000	1.161	87.075
	<b>Ճարտարապետաշինարարական մաս /վերանորոգվող մաս/</b>				0.000
	<b>Պատեր և միջնապատեր</b>				0.000
14	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածքի ամրանավորումով և բետոնացմամբ	մ <sup>2</sup>	260.000	2.773	720.980
15	Շարվածքի ամրանավորում	տն	0.520	309.295	160.833
16	Բացվածքի շար 20սմ պեմզաբլոկներով շարվածքի ամրանավորումով և բետոնացմամբ	մ <sup>3</sup>	2.000	25.358	50.716
17	Շարվածքի ամրանավորում	տն	0.040	309.295	12.372

	Բացվածքներ /դռներ և պատուհաններ/				
18	Առկա մ/պլաստե խուլ դռների ձևափոխում ապակեպատ ԱԴ-12, ԱԴ-13, ԱԴ-14, ԱԴ-18	մ <sup>2</sup>	13.000	9.138	118.794
19	Մ/պլաստե դռների տեղադրում /պահպանված/ ԱԴ-12, ԱԴ-13, ԱԴ-14, ԱԴ-15, ԱԴ-18, ԱԴ-20	մ <sup>2</sup>	31.810	1.552	49.369
20	Մետապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում բացվող /1,4x2/х1 /տոր/	մ <sup>2</sup>	2.800	20.884	58.475
21	Ալյումինե պրոֆիլներով արտաքին դռան բլոկների տեղադրում բացվող մաս	մ <sup>2</sup>	10.300	31.589	325.367
22	Ալյումինե պրոֆիլներով արտաքին դռան բլոկների տեղադրում չբացվող մաս	մ <sup>2</sup>	2.700	21.009	56.724
23	Մետապլաստե սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+4 դռների տեղադրում	մ <sup>2</sup>	63.000	28.513	1796.319
	<b>Սվաղե, երեսպատման, հարդարման աշխատանքներ</b>				0.000
24	Նոր շարված միջնորմների լավորակ գաջե սվաղ	մ <sup>2</sup>	322.000	1.588	511.336
25	Պատերի գաջե սվաղի նորոգում /այդ թվում շեպեր/	մ <sup>2</sup>	329.000	1.777	584.633
26	Առաստաղների լավորակ գաջե սվաղ	մ <sup>2</sup>	198.000	1.889	374.022
27	Առաստաղների գաջե սվաղի քսահարթեցում	մ <sup>2</sup>	453.200	1.630	738.716
28	Պատերի ցեմենտ ավազե սվաղ /այդ թվում շեպեր/	մ <sup>2</sup>	281.200	1.686	474.103
29	Պատերի երեսպատում հաղճասալով H=2,2մ /այդ թվում շեպեր/	մ <sup>2</sup>	204.000	4.256	868.224
30	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատմամբ	մ <sup>2</sup>	1375.200	1.066	1465.963
31	Շեպերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատմամբ	մ <sup>2</sup>	28.000	1.066	29.848
32	Առաստաղների լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատմամբ	մ <sup>2</sup>	658.300	1.160	763.628
	<b>Հատակներ, աստիճաններ, աստիճանաբազրիքներ</b>				0.000
33	Ցեմենտե հարթեցնող շերտի պատրաստում 40մմ հաստությամբ	մ <sup>2</sup>	606.700	1.243	754.128
34	Հատակի պատրաստում արհեստական գրանիտե սալերից /պրեսգրանիտ/ /աստիճանահարթակով/	մ <sup>2</sup>	130.800	8.749	1144.369
35	Շրիշակների տեղադրում պրեսգրանիտե սալերից H=12սմ /90x0,12/	մ <sup>2</sup>	10.800	7.379	79.693
36	Լամինատե հատակների պատրաստում /սպունգով և շրիշակով/	մ <sup>2</sup>	480.000	3.519	1689.120
37	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում պրեսգրանիտե սալերով	մ <sup>2</sup>	85.400	11.185	955.199
38	Շրիշակների տեղադրում պրեսգրանիտե սալերից	մ <sup>2</sup>	4.500	7.379	33.206
39	/60x30/մմ փոշեներկված խողովակներից աստիճանաբազրիքների տեղադրում H=1,1մ, /14x14/մմ ճաղերով	գմ	27.300	10.337	282.200
	<b>Արտաքին աշխատանքներ</b>				0.000
40	Մուտքի /շեմի/ հարթակի երեսպատում 30մմ հաստ.բազալտե սալերով	մ <sup>2</sup>	11.700	10.514	123.014
41	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 40մմ հաստ./հորիզոնական մաս/, 20մմ հաստ./ուղղահայաց մաս/ բազալտե սալերով	մ <sup>2</sup>	26.100	12.798	334.028
42	Աստիճանների փոշեներկված բազրիքների տեղադրում H=1,1մ	գմ	15.000	10.337	155.055
43	Արտաքին պատերի կարանների մաքրում ց/ավազից /վաճուճով/	մ <sup>2</sup>	110.000	0.137	15.070

44	Արտաքին պատերի ց/ավազե	մ <sup>2</sup>	470.000	1.630	766.100
45	Արտաքին պատերի մածկապատում	մ <sup>2</sup>	470.000	0.160	75.200
46	Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով	մ <sup>2</sup>	470.000	0.446	209.620
47	Գույքային տախտակամածի պատրաստում և քանդում	մ <sup>2</sup>	470.000	0.577	271.190
	<b>Տանիքային աշխատանքներ</b>				0.000
48	Տանիքածածկույթի ասբոշիֆերի /կոտրտված/ ծածկույթի փոխարինում	մ <sup>2</sup>	10.500	1.581	16.601
	<b>Շքամուտքի հովհար</b>				0.000
49	Անցքերի շաղափում պատերում d=25մմ	հատ	15.000	0.102	1.530
50	/60x40/մմ, /40x20/մմ մետաղական խողովակներից կարկասի պատրաստում	տն	0.150	449.163	67.374
51	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.150	22.297	3.345
52	Գլխածածկույթի տեղադրում պոլիկարբոնատից	մ <sup>2</sup>	11.500	7.275	83.663
	<b>Ներքին սառը ջրամատակարարման ցանց</b>				0.000
	<b>Ապամոնտաժային աշխատանքներ</b>				0.000
1	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ15մմ	զմ	30.000	0.252	7.560
2	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ20մմ	զմ	25.000	0.252	6.300
	<b>Մոնտաժային աշխատանքներ</b>				0.000
3	Խրամուղու մշակում 3-րդ կարգի բնահողում ձեռքով	մ <sup>3</sup>	5.000	1.633	8.165
4	Խրամուղու հետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	5.000	0.683	3.415
5	Φ57x4մմ պողպատե խողովակի տեղադրում պատերի վրա	զմ	9.500	2.159	20.511
6	Պողպատե խողովակի հիդրավիլի փորձարկում	զմ	9.500	0.057	0.542
7	Φ57x4մմ պողպատե խողովակաշարի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում	զմ	9.500	0.649	6.166
8	Մետաղական աստիճանների և տարրերի յուղաներկում 2 շերտ	մ <sup>2</sup>	0.500	0.838	0.419
9	Թուջե սողնակի տեղադրում Φ50մմ	հատ	2.000	11.723	23.446
10	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Φ40մմ /լվացումով և հիդրավիլի փորձարկումով/	զմ	7.700	1.277	9.833
11	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Φ25մմ /լվացումով և հիդրավիլի փորձարկումով/	զմ	13.500	0.878	11.853
					0.000
12	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Φ20մմ /լվացումով և հիդրավիլի փորձարկումով/	զմ	34.500	1.019	35.156
13	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Φ15մմ /լվացումով և հիդրավիլի փորձարկումով/	զմ	78.500	0.981	77.009
14	Փականի տեղադրում Φ15մմ	հատ	4.000	2.964	11.856
15	Փականի տեղադրում Φ20մմ	հատ	2.000	3.164	6.328

16	Փականի տեղադրում Փ25մմ	հատ	2.000	3.539	7.078
17	Գնդաձև փականների տեղադրում Փ15մմ	հատ	31.000	2.839	88.009
18	Լվացարանի ծորակ - խառնիչի տեղադրում	հատ	21.000	4.155	87.255
19	Խոհանոցակոնքի ծորակ - խառնիչի տեղադրում	հատ	4.000	4.155	16.620
20	Ցնցուղի ծորակ - խառնիչի տեղադրում	հատ	1.000	4.155	4.155
21	Ֆիտինգներ Փ15-Փ20մմ	հատ	210.000	0.045	9.450
22	Ֆիտինգներ ներքին և արտաքին պարուրակներով Փ15մմ	հատ	39.000	0.162	6.318
23	Ֆիտինգներ ներքին և արտաքին պարուրակներով Փ20մմ	հատ	4.000	0.162	0.648
24	Ֆիտինգներ ներքին և արտաքին պարուրակներով Փ25մմ	հատ	4.000	0.198	0.792
25	Ֆիտինգներ ներքին և արտաքին պարուրակներով Փ32մմ	հատ	4.000	0.198	0.792
26	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով Փ40մմ	զմ	7.700	0.198	1.525
27	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով Փ25մմ	զմ	13.500	0.126	1.701
28	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով Փ20մմ	զմ	34.500	0.099	3.416
29	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով Փ15մմ	զմ	78.500	0.090	7.065
	<b>Ներքին տաք ջրամատակարարման ցանց</b>				0.000
1	Պոլիպրոպիլենային այլումինե շերտով խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Փ20մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	53.000	1.268	67.204
2	Պոլիպրոպիլենային այլումինե շերտով խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Փ15մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	76.500	1.168	89.352
3	Փականի տեղադրում Փ15մմ	հատ	2.000	2.964	5.928
4	Փականի տեղադրում Փ20մմ	հատ	4.000	3.164	12.656
5	Գնդաձև փականների տեղադրում Փ15մմ	հատ	25.000	2.839	70.975
6	Ֆիտինգներ Փ15-Փ20մմ	հատ	185.000	0.045	8.325
7	Ֆիտինգներ ներքին և արտաքին պարուրակներով Փ15մմ	հատ	29.000	0.162	4.698
8	Ֆիտինգներ ներքին և արտաքին պարուրակներով Փ20մմ	հատ	8.000	0.162	1.296
9	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով Փ20մմ	զմ	53.000	0.099	5.247
10	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով Փ15մմ	զմ	76.500	0.090	6.885
	<b>Հակահրդեհային ցանց</b>				0.000
1	Փ57x4մմ պողպատե խողովակի տեղադրում պատերի վրա	զմ	37.000	2.197	81.289
2	Փ57x4մմ պողպատե խողովակի հիդրավլիկ փորձարկում	զմ	37.000	0.057	2.109
3	Թուջե սողնակի տեղադրում Փ50մմ	հատ	3.000	11.723	35.169
4	Հակահրդեհային փականի տեղադրում D50մմ, /ներառյալ ձկախողովակը 20մ, արկղը 620x850x250 մմ չափերի/	կ-տ	4.000	43.359	173.436

5	Ռետինե ճկուն միացումներ $\Phi 80$ մմ	հատ	4.000	0.495	1.980
6	Մետաղական խողովակաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	6.000	0.838	5.028
7	Պողպատե ձևավոր մասեր	տն	0.025	622.847	15.571
	<b>Ներքին կոյուղու ցանց</b>				0.000
	<b>Ապամոնտաժային աշխատանքներ</b>				0.000
1	Արտաքննողային պրունկավոր թասերի քանդում	հատ	3.000	1.957	5.871
2	Լվացարանի ապամոնտաժում	հատ	1.000	0.368	0.368
3	Թուջե խողովակների ապամոնտաժում $\Phi 100$ մմ	զմ	34.000	0.642	21.828
4	Թուջե խողովակների ապամոնտաժում $\Phi 50$ մմ	զմ	15.000	0.634	9.510
	<b>Մոնտաժային աշխատանքներ</b>				0.000
5	Խրամուղու մշակում 3-րդ կարգի բնահողում ձեռքով	մ <sup>3</sup>	25.000	1.633	40.825
6	Խրամուղու հետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	25.000	0.683	17.075
7	Պոլիէթիլենի խողովակաշարի տեղադրում խրամուղում $\Phi 100$ մմ /հիդրավիկ փորձարկումով/	զմ	41.000	1.095	44.895
8	Պոլիէթիլենի խողովակաշարի տեղադրում խրամուղում $\Phi 50$ մմ /հիդրավիկ փորձարկումով/	զմ	24.000	0.764	18.336
9	Պոլիէթիլենի խողովակաշարի տեղադրում պատերի վրա և առաստաղով $\Phi 100$ մմ /հիդրավիկ փորձարկումով/	զմ	58.000	1.180	68.440
10	Պոլիէթիլենի խողովակաշարի տեղադրում պատերի վրա և առաստաղով $\Phi 50$ մմ /հիդրավիկ փորձարկումով/	զմ	50.000	0.815	40.750
11	Ձուգարանակոնքի տեղադրում	հատ	14.000	20.195	282.730
12	Կերամիկական լվացարանի տեղադրում	հատ	21.000	12.186	255.906
13	Երկտեղանոց խոհանոցակոնքի տեղադրում	հատ	4.000	14.390	57.560
14	Արտաքննողի պրունկավոր թասի տեղադրում	հատ	2.000	13.668	27.336
15	Լոգարան-տակդիրի տեղադրում	հատ	1.000	11.465	11.465
16	Այլումինե հոսակի տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	1.000	1.423	1.423
17	Այլումինե հոսակի տեղադրում $\Phi 100$ մմ	հատ	7.000	3.657	25.599
	<b>Պլաստմասե ձևավոր մասեր</b>				0.000
18	Ծունկ $\Phi 100$ մմ $90^\circ$	հատ	3.000	1.002	3.006
19	Ծունկ $\Phi 50$ մմ $90^\circ$	հատ	23.000	0.756	17.388
20	Եռաբաշխիչ $\Phi 50/\Phi 50$ մմ	հատ	21.000	1.182	24.822
21	Եռաբաշխիչ $\Phi 100/\Phi 50$ մմ	հատ	9.000	1.365	12.285
22	Եռաբաշխիչ $\Phi 100/\Phi 100$ մմ	հատ	17.000	1.565	26.605
23	Քառաբաշխիչ $\Phi 100/\Phi 100$ մմ	հատ	2.000	2.823	5.646

24	Թեքում $\Phi 100$ մմ $135^\circ$	հատ	47.000	0.947	44.509
25	Թեքում $\Phi 50$ մմ $135^\circ$	հատ	38.000	0.752	28.576
26	Անցում $\Phi 100/\Phi 50$ մմ	հատ	5.000	0.848	4.240
27	Ստուգիչ $\Phi 100$ մմ	հատ	6.000	1.435	8.610
28	Ստուգիչ $\Phi 50$ մմ	հատ	4.000	1.064	4.256
	<b>Ջեռուցում</b>				0.000
	<b>Ապամոնտաժային աշխատանքներ</b>				0.000
1	32 կվտ. ջեռուցման տուրբո կաթսայի ապամոնտաժում պահեստավորումով / հետագա օգտագործման համար/	հատ	3.000	5.640	16.920
2	32 կվտ. ջեռուցման տուրբո կաթսայի ապամոնտաժում պահեստավորումով /հանձնում պատվիրատուին/	հատ	1.000	5.640	5.640
3	Այումինե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում պահեստավորումով /հետագա օգտագործման համար/ 359 սեկցիա միջինը 8 սեկցիա	հատ	45.000	0.723	32.535
4	$\Phi 20-40$ մմ պոլիպրոպիլենային խողովակների ապամոնտաժում	զմ	250.000	0.556	139.000
	<b>Մոնտաժային աշխատանքներ</b>				0.000
5	Այումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում (օգտագործելով պահպանվածը)	էկմ	100.520	0.497	49.958
6	Նոր այումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում	էկմ	56.840	0.497	28.249
7	Այումինե ջեռուցման մարտկոցների արժեքը $H=500$ մմ	սեկց	203.000	3.579	726.537
8	$\Phi 89 \times 3,5$ մմ պողպատե խողովակի տեղադրում	զմ	4.000	3.332	13.328
9	Պողպատե խողովակի հիդրավլիկ փորձարկում	զմ	4.000	0.057	0.228
10	Պոլիպրոպիլենային այումինե շերտով խողովակաշարի տեղադրում $\Phi 63 \times 8,6$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	6.000	3.838	23.028
11	Պոլիպրոպիլենային այումինե շերտով խողովակաշարի տեղադրում $\Phi 50 \times 8,4$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	5.000	3.180	15.900
12	Պոլիպրոպիլենային այումինե շերտով խողովակաշարի տեղադրում $\Phi 40 \times 6,7$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	72.000	2.334	168.048
13	Պոլիպրոպիլենային այումինե շերտով խողովակաշարի տեղադրում $\Phi 32 \times 5,4$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	60.000	1.388	83.280
14	Պոլիպրոպիլենային այումինե շերտով խողովակաշարի տեղադրում $\Phi 25 \times 4,2$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	135.000	1.236	166.860
15	Պոլիպրոպիլենային այումինե շերտով խողովակաշարի տեղադրում $\Phi 20 \times 3,4$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	345.000	1.255	432.975
16	Մարտկոցների միացման կոմպլեկտ	հատ	59.000	1.126	66.434
17	Մարտկոցի փական վերևի անկյունային $\Phi 20$ մմ	հատ	59.000	3.539	208.801
18	Մարտկոցի փական ներքևի անկյունային $\Phi 20$ մմ	հատ	59.000	3.389	199.951
19	Օդահեռացման փական $\Phi 15$ մմ	հատ	59.000	1.569	92.571

20	Փական - ամերիկանկա $\Phi 630$ մ	հատ	2.000	7.206	14.412
21	Փական - ամերիկանկա $\Phi 500$ մ	հատ	2.000	6.089	12.178
22	Փական - ամերիկանկա $\Phi 400$ մ	հատ	10.000	5.215	52.150
23	Փական - ամերիկանկա $\Phi 320$ մ	հատ	2.000	4.379	8.758
24	Փական - ամերիկանկա $\Phi 250$ մ	հատ	2.000	3.539	7.078
25	Դատարկման փականների տեղադրում $\Phi 150$ մ	հատ	28.000	2.801	78.428
26	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով $\Phi 400$ մ	զմ	72.000	0.198	14.256
27	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով $\Phi 320$ մ	զմ	60.000	0.162	9.720
28	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով $\Phi 250$ մ	զմ	44.000	0.126	5.544
29	Խողովակների մեկուսացում ռետինե ջերմամեկուսիչ խողովակներով $\Phi 200$ մ	զմ	74.000	0.099	7.326
30	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	հատ	395.000	0.063	24.885
31	Պոլիպրոպիլենային խողովակների ամրացում	հատ	650.000	0.045	29.250
32	Մարտկոցների ամրացում	հատ	236.000	0.375	88.500
33	Պողպատե Խողովակի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	1.120	0.838	0.939
34	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում $\Phi 25 \times 2,3$ մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	10.000	0.878	8.780
35	Պոլիպրոպիլենային $\Phi 200$ մ խողովակների խցափակում	տեղ	30.000	0.030	0.900
36	Պոլիպրոպիլենային խողովակի տեղադրում $\Phi 20 \times 3,4$ մմ գոյություն ունեցող ցանցի համար /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	զմ	20.000	1.049	20.980
37	Պոլիպրոպիլենային խողովակների միացում գոյություն ունեցող ցանցին $\Phi 25$ մմ $\times$ $\Phi 20$ մմ /եռակցման արդուկով/	տեղ	10.000	0.328	3.280
38	32 կվտ. ջեռուցման տուրբո կաթսայի մոնտաժում /օգտագործելով պահպանվածը/	հատ	3.000	11.281	33.843
39	Ջեռուցման համակարգի պոմպ $Q=4,5$ մ <sup>3</sup> /ժամ, $H=10$ մ, $n=1400$ պտ/րոպե, $N=0,76$ կվտ	հատ	1.000	271.874	271.874
40	Համալրման պոմպ $Q=1,0$ մ <sup>3</sup> /ժամ, $H=10$ մ, $n=1400$ պտ/րոպե, $N=0,74$ կվտ	հատ	1.000	97.979	97.979
41	Հետադարձ փականի տեղադրում $\Phi 50$ մմ	հատ	1.000	5.675	5.675
42	Հետադարձ փականի տեղադրում $\Phi 25$ մմ	հատ	1.000	3.692	3.692
43	Անցքերի բացում պատերի մեջ $\Phi 100$ մմ	տեղ	8.000	0.676	5.408
44	Անցքերի բացում պատերի մեջ $\Phi 80$ մմ	տեղ	13.000	0.676	8.788
45	Անցքերի բացում պատերի մեջ $\Phi 700 \times 450$ մմ	տեղ	2.000	1.925	3.850
46	Անցքերի վերականգնում պատերում	մ <sup>3</sup>	0.075	135.916	10.194
47	Մետաղական պատյանի տեղադրում պատերի մեջ $\Phi 108 \times 4$ մմ, $L=300$ մմ, 8տեղ	զմ	2.400	4.286	10.286
48	Մետաղական պատյանի տեղադրում պատերի մեջ $\Phi 89 \times 3,5$ մմ, $L=300$ մմ, 13տեղ	զմ	3.900	3.332	12.995
49	Անցքերի բացում ծածկերում $\Phi 80$ մմ	տեղ	18.000	0.946	17.028

50	Անցքերի վերականգնում ծածկերում $\Phi 80$ մմ	մ <sup>3</sup>	0.900	181.796	163.616
51	Մետաղական պատյանի տեղադրում ծածկի մեջ $\Phi 89 \times 3,5$ մմ, $L=300$ մմ, 18տեղ	զմ	5.400	3.332	17.993
52	Մետաղական պատյան $\Phi 57 \times 3,0$ մմ, $L=2,5$ մ 1տեղ	զմ	2.500	2.024	5.060
	<b>Օդափոխություն</b>				0.000
1	Կանալային օդամուղ արտածման համար $L=1100$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,2$ կվտ /BEHTC/	հատ	1.000	42.674	42.674
2	Կանալային օդամուղ արտածման համար ECO250 $L=800$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,055$ կվտ	հատ	1.000	30.897	30.897
3	Կանալային օդամուղ արտածման համար $L=1500$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,02$ կվտ /BEHTC-125/	հատ	1.000	9.612	9.612
4	Կանալային օդամուղ արտածման համար $L=6000$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,042$ կվտ	հատ	4.000	17.000	68.000
5	Կանալային օդամուղ արտածման համար $L=2980$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,055$ կվտ	հատ	4.000	9.173	36.692
6	Կանալային օդամուղ ներածման համար BENTC $L=1050$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,085$ կվտ	հատ	1.000	7.235	7.235
7	Կանալային օդամուղ ներածման համար ECO250 $L=8000$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,055$ կվտ	հատ	2.000	30.897	61.794
8	Առանցքային օդամուղ ներածման համար BEXT BBP $Q=2120$ մ <sup>3</sup> /ժ, $N=0,075$ կվտ	հատ	1.000	29.361	29.361
9	Աղմկակախուցիչ խողովակային $350 \times 200 \times 1000$ մմ	հատ	2.000	30.513	61.026
10	Ճկուն ներդիր սարքերի համար	հատ	15.000	3.770	56.550
11	Մետաղական կոնստրուկցիա ամրացումների համար	կգ	115.000	0.437	50.255
12	Ուղղանկյուն օդատար ցինկապատ թիթեղից մինչև 1000մմ $g=0,6$ մմ	մ <sup>2</sup>	120.000	4.535	544.200
13	Ուղղանկյուն օդատար ցինկապատ թիթեղից 1000մմ-ից մեծ $g=0,7$ մմ	մ <sup>2</sup>	44.000	4.610	202.840
14	Օդատար PVC $d=200$ մմ	զմ	80.000	2.338	187.040
15	Օդատար PVC $d=150$ մմ	զմ	35.000	1.665	58.275
16	Օդատար PVC $d=100$ մմ	զմ	15.000	1.359	20.385
17	Օդատարների մեկուսացում ֆոլգայապատ հանքային բամբակով	մ <sup>2</sup>	197.000	1.240	244.280
18	Գլխանոց $500 \times 300$ մմ չափերի	հատ	3.000	7.513	22.539
19	Գլխանոց $400 \times 300$ մմ չափերի	հատ	2.000	6.114	12.228
20	Գլխանոց $\Phi 300$ մմ չափերի	հատ	7.000	6.905	48.335
21	Ներմուծող, արտածող շարժական ճաղաշար $600 \times 100$ մմ	հատ	4.000	3.118	12.472
22	Ներմուծող, արտածող շարժական ճաղաշար $400 \times 200$ մմ	հատ	1.000	3.706	3.706
23	Ներմուծող, արտածող շարժական ճաղաշար $300 \times 150$ մմ	հատ	4.000	2.681	10.724
